ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2019թ. թիվ 575-Ա

«ՍՊԻՏԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին» թիվ 440-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի մայիսի 15-ի թիվ 345-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 03.10.2019թ. ժամը 11.00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արթուր Մխիթարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Վալերի Ջաղինյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 2
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հոկտեմբերի 2-ի
թիվ 575-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

կ ա զ մ

Արթուր Մխիթարյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Ռաֆայել Հարությունյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Արտյոմ Շահվերդյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունների կատարող
Ալիկ Սահակյան - մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Լևոն Բերոյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ
Վալերի Ջաղինյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
Ռուբեն Խանզադյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

10/2/2019

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՋԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՋԱՏՐՅԱՆ